

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

2.

ԵՐԴԵՐԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ԽԱՂԵՐԻՅ

Ամեն մի խաղ, երկեակ լինի թէ եռեակ կամ քառեակ, կազմում է մի առանձին երգ։ Սակայն կեանքի մէջ, այսինքն երգելիս, մի քառեակով չի բաւականանում երգիչը, — այդ կը տեւէր միայն մի երկու վայրկեան։ Երգեցողութիւնը սովորաբար աւելի երկար է տևում. հանդէսների և պարերի ժամանակ նոյն իսկ ժամերով երգւում է։ Բառերն արագ փոփոխւում են, իսկ եղանակն անփոփոխ մնում։

Իրարուց անկախ խաղերը մի և նոյն եղանակով և մի և նոյն կրկնակով ետեւէ ետեւ ասւում են ուղածի չափ երկար տևողութեամբ, մինչև որ կամ ձանձրանում են ու եղանակը փոխում, կամ նոյն չափով յօրինուած երգերի պաշարը սպառւում է։ Ով ներկայ է եղել մեր ժողովրդական պարերին և երգեցողութեան մրցմանը, նա այս անձամբ նկատած կը լինի։ Աւելորդ չի լինիլ սակայն յիշել մի դէպք։

Մի անգամ, երբ ես Երևանից էջմիածին էի գնում, կառապանն իւր կողքին նստեցրեց իւր ծանօթներից մէկին։ Այս երկուսը սկսեցին մրցել թէ ով ում «կը կապի», այսինքն թէ ո՞րն աւելի խաղ գիտէ։ Եւ Երևանի այգիների տակից մինչև Վաղարշապատի մօտերը, Փարաբար գիւղում միայն դադարելով, նրանք մի ժամից աւելի մի և նոյն եղանակով երգեցին փոփոխակի բազմազան քառեակներ։ Եւ այս շատ հեշտ է, քանի որ միանման չա-

փով յօրինուած խաղերը շատ են և որ գլխաւորն է՝ խաղերը, սակաւ բացառութեամբ, չունին իրենց յատուկ հաստատուն եղանակը։ Կրկնակները, ընդհակառակն, չըհաշուած լէ-լէներն ու նա-նայները, կապուած են մի հաստատուն եղանակի հետ. գրեթէ ամեն կրկնակ ունի իւր յատուկ եղանակը թէ իւր և թէ իւր հետ երգուած խաղերի համար։ Այս պատճառով է, որ եղանակները սովորաբար կրկնակներով են կոչուում. օրինակ՝ Զան գիւլում, Ախ մարալ Զան ևլն։

Ստեղծագործութեան մէջ ևս եղանակը կապուած է աւելի կրկնակի հետ։ Մեր ժողովրդական երգն այժմ զարգացման այնպիսի շրջանի մէջ է, որ եղանակներն աւելի արագ են փոփոխութեան ենթարկուում, հները մոռացուում են և տեղը նորերն ստեղծուում, քան բուն խաղերը։ Այս պատճառով և կրկնակներն աւելի շուտ են հնանում և տեղի տալիս նորերին, որովհետեւ նոր եղանակը պահանջում է և նոր կրկնակ. նոր եղանակը ծնւում է մեծ մասամբ նոր կրկնակի հետ միացած. մինչ բուն խաղերն այդպիսի արագութեամբ չեն փոփոխուում, նորոգուում կամ նորերը յօրինուում։ Հին խաղերը, քանի որ չափը ներում է, գնում են նոր եղանակի և կրկնակի տակ։

Մի և նոյն կրկնակի հետ կարելի է երգել ամեն խաղ, եթէ չափը ներում է, և ընդհակառակն՝ մի և նոյն խաղը կարելի է երգել ամեն կրկնակի հետ, դարձեալ եթէ չափը ներում է։ Ժողովրդական խաղի ասուելու էական յատկութիւնն է այս, որ, ինչպէս յետոյ կը տեսնենք, միջոց է տալիս խաղերից ամբողջական ընդարձակ երգեր կադմելուն։

Աւելորդ չէ մի քանի օրինակներ բերել, թէպէտ և մեր ժողովրդական երգի այնպիսի յատկութիւններից է այս, որ օրինակներով ցոյց տալու կարիք չպիտի լինէր։ Բայց պէտք է ի նկատի ունենալ «Մուրճ» ամսագրի դաւառագիտուն մատենախօսի պէսերին, որոնք, եթէ այս կամ այն երգչից լսել են, օրինակ, «Հօյ նարէ, Գութանը

հայ կտանիմ», կարծում են թէ «Հոյ նարէ» կրկնակի հետ միայն «Գութանը հայ կտանիմ»... քառեակը կերգուի. կամ երբ «Ես վերէն կուգայի»... երգը իրենք միայն «Քնն, զալպ ու խային, եար չեղար ինձի» կրկնակի հետ են լսել, այն էլ Կարսում¹⁾, իրաւունք ունին ուրեմն իբրեւ մատենախօս առաջ դալու և գրելու թէ այդ «երգը զարսեցոց երգ է և հիմնովին աղճատուած է ժողովածուի մէջ» (իմա իմ և Կոմիտաս վարդապետի խմբագրած «Հայ զար ու մի խաղ» ժողովրդական երգարանը). և ապա «խսկականը», այսինքն իրենց իմացած վարիանտը, մի տուն մէջ բերելուց յետոյ կարող են գրել. «Միւս տուները չեմ յիշում, բայց լաւ գիտեմ, որ ժողովածուի միջիններն այս երգին չեն պատկանում և որ գլխաւորն է, առաջ բերած կրկնակը չունի երբէք: Այդ երգի կրկնակն իմ առաջ բերածս տան վերջին երկու տողն են».— Բայց մենք մեր խնդրին գանք:

Օրինակ վերցնենք հենց առաջին պատահած երգը մեր ձեռի տակ ունեցած Ազգ. Հանդէսի VІІ-VІІІ գրքից: Այստեղ եր. 442. «Բաղումի ջան բաղումի» (արեւմտեան տառադարձութեամբ՝ սլաղըմի ճան սլաղըմի) կրկնակի քակ երգւում է իբրեւ առաջին տուն.

Արի էրթանք Կըռքնկու սար,
Կուգես հարիւր, կուտամ հազար.
Թուխ աչքերու խաթրի համար,
Շէկ ունքերու խաթրի համար:

Սոյն քառեակը մի ուրիշ ձևով գտնում ենք Սրուանձաւ. Համով Հոտով եր. 327, իբրեւ «պարերգ» առանց կրկնակի.

1) Այս երգի երեք միացած տներ կարելի է գտնել Լալալայեանի «Ձաւախքի Բուրմունք» եր. 21: Սոյն երգը բոլորովին տարբեր կազմութեամբ կայ և Սրուանձաւեանի «Համով Հոտովի» մէջ եր. 309. «Սիրողներ» վերնագրի տակ: Երկսի մէջ ևս այս երգեցը, որոնք Կարսում չեն գրուած հարկաւ, անկախ փոքր երգերից են կազմուած: Մենք վերլուծութիւն անել չենք ուղում:

Եւ ու երթանք Կրօննկու սար,
Քօշկ մի շինենք, մտնենք հիսար.
Թող գայ վեր մե Շահն ու Խոնդքար.
Ուղէ հարիւր, կուտամ հազար,
Բաղէ, քո թուխ աչքիդ համար.

Սոյն երգն իբրեւ աղճատ եռեակ գտնուած ենք Սեդ-
րակեան Քն. Մշ. և Վան. եր. 23, «Աղջիկ, եար անենք,
եար անենք, Դիլբար, եար անենք, եար անենք» կրկնակի
տակ.

Քոչքըմ [շինենք], մտնենք խասար,
Կուզեն խարիր, կուտամ խազար.
Բարով եղնիմ քո խոր փեսայ.

Նոյն «Բաղումի գիւլ բաղումի» կրկնակի տակ (գիւլ
և ջան բառերն իրար փոխանակուած են, ինչպէս օրինակ՝
Հօյ նազան ըմ գիւլ նազան ըմ՝ ասուած է և ջան նազան
ըմ) Շէրենց Վանայ Սազ Ա. 40 բերուած է իբրեւ առա-
ջին տուն.

Տուն մ եմ շինե գետի բերան,
Վերէն թալի ջուխտ ըմ գերան.
Մէկն ի խօխէ, մէկն ի ծիրան.
Խօխէն կոտրաւ, մնաց ծիրան.
Ծիրան փթխաւ եարոջ բերան:

Այս խաղը սակայն Սեդրակեան Քն. Մշ. և Վան. եր.
26 բերած է իբրեւ առաջին տուն «Ջանիման, ջանիման»
կրկնակի տակ հետեւեալ ձևով.

Տուն եմ շինե գետու բերան,
Թալինք ի նե ջուխտ ըմ գերան.
Մէկն էր խօխի, մէկն էր ծիրան
Կոտրաւ խօխին, մնաց ծիրան:

Այս «Ջանիման, ջանիման» (արեւմտ. տառադարձու-
թեամբ «Ճանիման, ճանիման») կրկնակի հետ սակայն Ազգ.
Հանդէս. VII-VIII, 443 գրուած է իբրեւ առաջին տուն.

Մեր դռան առաջ ծառ մի պնդուկ,
Ձեր դռան առաջ ծառ մի պնդուկ,
Առնեմ քեզի, մտնեմ սնդուկ.

Այս եռեակն էլ սակայն Քնար. Հայկական եր. 177
դրուած է «Հաւար Զուլօ, մաղաթ Զուլօ» եւն. կրկնակի
հետ այսպէս.

Մեր դռան յետե արտ ըմ պնդուկ,
Ձեր դռան յետե արտ ըմ պնդուկ,
Զուլօն առնեմ՝ մտնեմ սնդուկ:

Նոյն «Բաղումի գիւլ բաղումի» կրկնակի հետ Մխիթար.
Տաղեր ու խաղեր եր. 244 բերուած է իբրեւ առաջին
սմն՝ միայն գռեհիկ արտասանութեամբ.

Սարէն կուգայ պալպաղ ջրեր,
Կը կաթկթի մարմառ քարէն ելն:

Այսպէս եթէ շարունակելու լինինք, ամբողջ գիրք
կարող ենք գրել. քանի որ ամեն խաղ էլ կարող է ամեն
կրկնակի հետ երգուել, եթէ. դարձեալ կրկնում ենք, չափը
ներում է, և մեր ժողովրդական երգերի ժողովածուները
լի են այդպիսի օրինակներով: Մենք յատկապէս առաջին
տները վերցրինք, որովհետեւ եթէ եղանակի ու կրկնակի
հետ քիչ ու շատ կապուած մնում են, առաջին տներն
են: Բայց այս էլ հաստատ չէ, ինչպէս վերեւում «Բա-
ղումի ջան բաղումի» կրկնակի համար դրածից երեւում
է. օրինակ հենց այժմ խիստ սիրուած «Հօյ նազան ըմ»
եւն. կրկնակի հետ «Տաղեր ու խաղեր» եր. 160 դրած է
իբրեւ առաջին տուն.

Բարձր բոյդ տալ չունի,
Լուս երեսդ խալ չունի,
Ձահիլ եարի մօտկացի,
Որ տխրիլ ու լալ չունի:

Նոյն «Հօյ նազան ըմ»... կրկնակի հետ «Լոյս» օրա-
ցոյց 1904, եր. 480 դրած է Ք. Կարամուրզայից իբրեւ
առաջին տուն.

Արազը հեշտացել ա,
Համբէքը կոշտացել ա ելն.

Իսկ Կոմիտաս վարդապետը նոյն կրկնակի համար ձայնագրած ունի իբրև առաջին տուն.

Պարնան սիրուն ծաղիկ ես,

Ինձ համար աղունիկ ես.

Գլխիս վրով պոխտ առւր,

Նախշուն-թե թիթեանիկ ես:

Եթէ առաջին տներն այսպէս տարբերուած են, փոփոխութեան էլ ոչ մի սահման չկայ յաջորդ տներէ նկատմամբ: Երգչի յիշողութիւնից կամ միտն ընկնելուց է կախուած մեծ մասամբ մի տան ետեւից այս կամ այն տունը կցելը:

Ասել չի ուզիլ, այսպէս ետեւէ ետեւ իբրև մի երգ երգուած խաղերը միայն մի ընդհանուր բան ունին, այն՝ որ նոյն օտքով և նոյն եղանակով ու կրկնակով են երգուած, և որ մեծ մասի բովանդակութիւնը սէրն է: Ել ուրիշ ներքին կապակցութիւն չունին: Ծիշտ է, անկախ քառեակները ետեւէ ետեւ երգուելով դառնում են մի երգի տներ, բայց իմաստով միում են դարձեալ իրարուց անկախ:

Թէ պատահմունքը որքան մեծ դեր է կատարում տների յաջորդութեան մէջ, այդ շատ լաւ երևում է մեր երգերի ժողովածուներից և նոյն իսկ ժողովրդի գործածութեան համար կազմուած երգարաններից: Այստեղ գրի առնողները կամ երգարան կազմողները, մոռանալով կամ չիմանալով, որ քառեակները մեծ մասամբ իսկապէս անկախ երգեր են և անկապ կցուածով են միայն մի և նոյն եղանակի տակ երգուած, ինչպէս լսել են, այնպէս էլ ետեւէ ետեւ շարում են տներն իբրև մի երգի մասեր, որով մի անմիտ բան է դուրս գալիս: Եւ միթէ ընթերցողներն իրաւունք չունին ասելու թէ մեր երգերն անհեթեթ բաներ են. դրանց տները ներքին կապակցութիւն չունին, ճիշտ ինչպէս անմիտ են համարում խաղերն առանձին առանձին վերցրած, որովհետեւ հրատարակում են նոյն իսկ երգարանների մէջ աղճատուած ձևով առանց «բնագիրը» վերականգնելու:

Բայց, ինչքան էլ պատահմունքով են խաղերը կցւում

իրար և անկապ տներով երգեր կազմում, երգեցողութեան այս էական յատկութիւնը միջոց է տալիս, ասացինք, անկախ խաղերից ամբողջական մեծ երգեր կազմելուն: Որովհետեւ երբեմն և տների յաջող ընտրութիւն է լինում, երբեմն մի և նոյն եղանակի տակ իրար յաջորդում են այնպիսի քառեակներ և նոյն իսկ երկեակներ, որոնք իմաստով յարմարում են իրար և միասին կազմում են մի ամբողջական երգ:

Այստեղից ահա առաջանում է ժողովրդական մեծ երգերի զարգացումը խաղերից՝ իբրև բաղադրիչ տարերքներից: Ժողովրդական մեծ երգն ուրեմն, այս դէպքում, կազմում է յարադրութեամբ, այսինքն անկախ փոքրիկ երգերը աւելի կամ՝ պակաս իմաստալից կերպով կցուելով իրար՝ կազմում են մեծ երգեր:

Սակայն այս յարադրութիւնը միշտ կոյր պատահմունքով և արտաքին չի լինում. անկախ երգերը միշտ լոկ մեքենայօրէն չեն միանում իրար հետ: Երգչի բանաստեղծական տրամադրութիւնն ու սրամտութիւնը մեծ դեր են խաղում այս գործում: Մի խաղ միւսին յարադրում է յաճախ գիտակցօրէն, և խաղերը յարադրուելիս կրում են ներքին փոփոխութիւն, իսկապէս վերամշակում են միասին մի ամբողջութիւն կազմելու համար. երգի մէջ մտնում է մի ընդհանուր իշխող բան, եթէ ոչ գաղափար, գոնէ զգացմունք, հոգեկան վիճակ, որ տները կապում է իրար հետ: Խաղերը յարադրում են, ուրեմն, բովանդակութեան համեմատ: Այս նպատակի համար ազդում են և ուրիշ հանգամանքներ, ինչպէս են՝ յաջող կրկնակները, կամ՝ տարբեր խաղերի մէջ եղած նոյն և նման քառեր ու խօսքեր, որ ընդհանուր գոյն են տալիս տներին, և ապա մի որ և է դէպք, որ առիթ է լինում իրեն յարմարող անկախ քառեակներն ի մի համախմբելու,

Տեսնենք օրինակներով մեր երգերի զարգացման այս երեք տեսակը սկսելով վերջին ազդող հանգամանքից:

Դէպքի կամ անձի ազդեցութեան տակ իրար հետ միանում են այն խաղերը, որոնք ասուած են որ և է հա-

մանման դէպքի կամ անձի առթիւ: Ռրանք իսկապէս վիպական քնարերգութեան տարերքն են: Օրինակ՝ մէկը խեղդուում է, մի մարդու սպանում են, մի աղջիկ փախցնում են ևւն. և ահա կազմուում է այդ առթիւ մի եղանակ ու կրկնակ, որի մէջ յիշուում է դիպուածի մի էական գիծ՝ յիշելով երբեմն և նրա անունը, որի գլխին եկել է դիպուածը: Կազմուում են և մի երկու խաղեր, որոնց մէջ պատմուում է դիպուածից: Եւ այսքանը բաւական է, որ իբրեւ կեդրոն իրեն քաշի ի հնուց անտի արդէն պատրաստի համանման բովանդակութեան խաղերի մի մասը, կամ թէ ուրիշ պատրաստի խաղերից այս կամ այն վերջունի և յարմարունի նոր պատահած դէպքի վրայ:

Որովհետեւ դէպքը կամ անձն եղել է և ունեցել է որոշ բնաւորութիւն, ուստի և խաղերը պատահաբար չեն կցուում իրար, այլ մի ներքին առնչութեամբ, բոլորը միասին ունին մի ընդհանուր բովանդակութիւն և պտտուում են պատահած դէպքի կամ անձի շուրջը: Սակայն տները շունին ներքին սեռ կապ և ոչ էլ հատուտ դասաւորութիւն, կամ որոշ թիւ. ուրիշ խօսքով արուեստաւոր յօրինուածքը դեռ պակասում է: Տների կապակցութիւնը տրամաբանական չէ, ուստի և լոյծ է: Տները հեշտութեամբ բաժանուում են իրարուց, յետ ու առաջ ընկնում, ամբողջութեան միջից դուրս գալիս ևւն: Երգչի քմահաճոյքը դեռ իշխում է կատարելապէս և իշխում է ամեն անգամ երգելիս ուրիշ տեսակ:

Խաղերի այս տեսակ համախմբումները մի դէպքի կամ անձի շուրջ՝ լոկ փորձեր են անկախ փոքր երգերից մեծ ամբողջական երգեր առաջ բերելու, և արուեստաւոր յօրինուածքի տեսակէտից՝ անյաջող փորձեր: Այստեղ ոչ մասերի որոշ դասաւորութիւն կայ և ոչ տների համար սահման:

Այսպէս համախմբուած երգերն ու նրանց եղանակները սովորաբար այլ ևս իրենց կրկնակների անունով չեն կոչուում, այլ դէպքի հերոսի անունով:

Այսպիսի երգերից է, օրինակ, «Գուլաբեցի Արշակի»

խաղը։ Սա մի 25—30 տարի առաջ Բալըղդեօլում՝ ձուկ որսալիս խեղդելում է։ Մահն երեւի առանձին տպաւորութիւն է թողնում իւր համագիւղացիների վրայ, որոնք խաղ ասել սիրում են. կաղմելում է վրան եղանակ ու կրկնակ.

«Շորորա, Սալաթ (կնոջ անունը), շորորա,

«Նաւակն (վար. լողկէն, դայեղն) Արշակին կ'օրորայ».

և ապա մի քանի քառեակներ Արշակի կեանքից ու եղբւրական մահից։ Երգն երեւի եղանակի պատճառով տարածւում է ուրիշ կողմեր, և տներն թիւը բազմապատկում է ուրիշ պատրաստի խաղերից։ Այս երգի քառեակներ և եռեակներ կարելի է գտնել ի միջի այլոց և Լալայեանի «Զաւախքի բուրմունք» եր. 23. ուր տները մեր նկարագրած ձևով խառն ի խառն և անկապ են։ Նոյն Արշակի խաղից եօթը տուն միայն առանձին ընտրութեամբ և որոշ դասաւորութեամբ դրած ենք և մեր «Հազար ու մի խաղ» երգարանի մէջ, եր. 58.

Այս կարգի երգերին պատկանում են և «Դերիկոն», Քնար Մշ. և Վան. եր. 17. Խաղեր ու Տաղեր. եր. 148, որի մէջ պատմւում է Յակոբի սպանման դէպքը։ Այսպիսի երգերից են և Աշխէնի երգը, Տաղեր ու Խաղեր. եր. 184, և ուրիշներ։

Այսպիսի երգերի քնարական տեսակին է պատկանում և Մաստարեցի Զուլոյի խաղը։ Զուլոն, ինչպէս ականատեսներից լսել ենք, 1850-ական թուականներին է ապրել, մի շատ գեղեցիկ, բայց և կասկածելի բարքի տէր կին, որին սիրահարներ շատ են եղել։ Զուլոյի համար 43 քառեակ և եռեակ բերուած են Քնար Հայկական եր. 173, ուր կրկնակն է.

«Հաւար Զուլօ, մաղաթ Զուլօ,

«Սանի գեօրգու՛մ, եանդը՛մ Զուլօ».

Այս կրկնակը ժամանակի ընթացքում արդէն փոխուած է. երկրորդ տողն ժողովուրդն ինքը թարգմանած է

հայերէն, աւելացնելով և մի երկրորդ տող, ինչպէս ունի ձայնագրած Կոմիտաս վարդապետը, և է հետեւեալը.

«Հաւար Զուլօ, մադաթ Զուլօ,
«Քեզի տեսայ, վառայ Զուլօ,
«Բացուիր, բացուիր, իմ վարդ Զուլօ:

Անշուշտ Զուլոյի իրեն վրայ մի քանի եռեակներ և քառեակներ կազմուած կը լինին, բայց Զուլոյի կրկնակի տակ երգուածները ոչ բոլորը հաւաստեալ Զուլոյինն են: Օրինակ՝ վերցնենք Տաղեր ու Խաղեր, էր. 243. Զուլոյի անուան բերուած 10 եռեակը, որոնք բոլորը կան Քնար Հայկական իբրև Զուլոյի խաղեր: Սրանցից հետեւեալ երեքը միայն կարող են Զուլոյինը լինել.

Ես Զուլօն եմ Մաստարեցի,
Հինգ օր արի մեր տուն կեցի,
Դէմ աղօթրան եկեղեցի:

Արև ընկաւ Խամուր բերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թող զիս քերթին:

Հելել-մելել Մարու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ Քալաշի փէշ:
Զուլօն եղնի ընձի փեշքէշ:

Տասից այս երեք եռեակը, ասում ենք, կարող են Զուլոյինը լինելը, մնացածները հաւաստեալ անկախ խաղեր են, որոնք միայն Զուլոյի վրայ չեն երգուում, այլ և ուրիշներին: Տեսնենք մէկ մէկ:

1, Չափար աղի նըշխուն յօդէն,
Նոր եմ եկել Զուլօյի մօտէն,
Չը կշտացայ անուշ հօտէն:

Այս եռեակը, որ ասում է զեղծ Զուլոյի մօտից եկող տղայի կողմից, մի ուրիշ ձևով մտնում է և «Իմալ էնիմ» երգի մէջ: Այստեղ երգողն իր «մատղաշ մանուկ» ամուսնուն դաւաճանող կինն է.

Ի՞մալ էնեմ ես քու դարդէն,
 Իմ երեսիս պատուաւ փարդէն.
 Նոր եմ եկել եարիս մօտէն,
 Զըկշտացայ համ ու հօտէն:

2, Տան քով անցայ, ճրագն էր վառ,
 Դու կու մանիս զողանի դառ,
 Որբեկերցի, արի՛ զիս ան:

Այս խաղի վարիանտներն երգւում են իբր Լուրիկի և Թուխ փուշով աղջկայ երգեր: Զաւախքի Բուրմունք, եր. 21. «Քիփի լուրիկ, լուրիկ, Գարնան քարեր վարդ էրիկ, լուրիկ» կրկնակի հետ.

Իրկըւորէ՛ ճրագն էր վառ,
 Դու կը մանէր զողանի դառ,
 Որբեկերցի, արի՛ զիս ան:

Նոյն տեղը եր. 22. «Ա՛խ լուրիկ, լուրիկ, լուրիկ, Կանաչ ու կարմիր լուրիկ» կրկնակի հետ.

Առաւօտուն թունդիր վառ,
 Լաչակ թալի խառ ու մառ,
 Կը լմանիս զողանի դառ:

Աղգադր. Հանդէս VП-VIII. 444. Նոյն երգը կրկնակ ունի.

«Շառաֆով թուխ փուշով աղջիկ,
 Դու ըսոր երես,
 «Ես ու դու ջուխտ կը քէլենք,
 Դու մոլորեր ես»:

Իսկ խաղի վարիանան է.

Առաւօտուն թոնիր վառ,
 Գլխս կապիր խառ ու մառ,
 Որբեկերցի՛ զիսի առ:

Նոյն խաղի վարիանան է և Վանայ Սազ Բ. եր. 29. «Րուրիկ Մայրամ, լուրիկ բարխէմ» ևլն. կրկնակի հետ.

Առաւօտուն թոնիր վառ,
 Սիւտակ լաչիկ խառ ու մառ,

Վարմիր սուրբ թառ ու մառ,

Դու կը նմանիս զողանի դառ:

Մենք ունինք և ուրիշները, որ աւելորդ է բերել:

3, Ջաղցի բոլոր յըմէն ուռ էր,

Աշխարհ կասէր Զուրն ծուռ էր,

Մէջ իմ սրտին լալ ու դուր էր:

Այս խաղի հիմնական մի երկեակը գտնուում ենք Ազգ. Հանդէս V-II-V-III. եր. 443. «Բաղըմի ջան բաղըմի» կըրկնակի տակ.

Գեղով կըսեն քո եար ծուռ,

Մէջ իմ սրտին լալ ու դուր:

Այս խաղի մի զարգացած վարիանտը կայ և Համով Հոտով եր. 305, ուրիշ երգերի հետ կցուած իբրեւ «Մոկացի Հայոց հարսանեաց պար».

Աշխարհ ասեն քո եար ծուռ էր,

Ալամ ասեն քո եար ծուռ էր.

— Խաղար ծուռ էր.

Մէջ իմ սրտին լալ ու դուր էր:

Սոյն խաղի վարիանտն ունինք և հետեւեալ ձևով.

Վանքի բոլոր մանդր նուռ է.

Սաւղալի ենք՝ չասէք ծուռ է.

Սէր ու սաւղէն խիստ մըմուռ է.

Երկիր կասեն՝ իմ եար ծուռ է:

4, Թոնդիր վառե, եղեր է մուխ,

Վապե փուչին, թորկեր է պուխ.

Ունքեր կամար, աչքերն է թուխ:

Այս խաղի վարիանտներն արդէն առաջ բերել ենք. յիշենք միայն, որ երգուում է զանազան կրկնակների հետ. իբրեւ Լուրիկի երգ, Ջաւախքի Բուրմ. եր. 20. 21. 22. իբրեւ Թուխ փուշով աղջկայ, Ազգ. Հանդէս. V-II-V-III. եր. 444. իբրեւ Բուրիկ մայրամ, Վանայ Սաղ. Բ. 29. իբրեւ Ալաջայ պար «Գլէջան, Մըրալէ» կրկնակով Համով Հոտով եր. 320 ևլն.

5, Տան քով անցայ, թափ քէլեցի,
 Լանգով զարկի, զերդիս բացի,
 Նարս տուն չէր, նստայ լացի:

Զուլոյի երգի այս տունը զարգացման զանազան ձե-
 ւերով գտնում ենք և ուրիշ երգերի մէջ. իբրեւ Լուրիկի
 երգ, Զաւախքի Բուրմ. եր. 22.

Նլայ երդիկ, թափ քէլեցի,
 Ոտս զարկի, երդիկ բացի,
 Նարս տուն չէր, նստայ լացի:

Իբրեւ Զանիմանի երգ ջանիման կրկնակի հետ Ազգ.
 Հանդ. VП-VIII. 443.

Նլայ տանիք, թափ քէլեցի,
 Զարկի լանկէ մ', երդիկ բացի,
 Իմ ետք տուն չէր, նստայ լացի,
 Փռ ու փռման թողի գացի:

Իբրեւ Ասմարի երգ «Բաղնի ջան» կրկնակի հետ, Քնար
 Մշ. և Վան. եր. 24.

Նլայ տանիս, թափ քէլեցի,
 Լանկով տուի, երդիս բացի,
 Կարմիր խնձոր գլորեցի,
 Ասմար տուն չէր, նստայ լացի:

Նոյն տեղն եր. 34. իբրեւ Խումարի երգ.

Նլանք տանիս, թափ քէլեցինք,
 Կարմիր խնձոր գլորեցինք,
 Յերդիս բացինք յերիչկացինք,
 Խումար տուն չէր, նստանք լացինք:

Նոյնը Բազէ անուան հետ կապուած Համով Հոտով.
 եր. 327.

Տան քով ընցայ, թափ քէլեցի,
 Բազէն տուն չէր, նստայ լացի,
 Տղէն կուլար, օրօրեցի:

6, Դու կայներ ես դէմ ամբողին,
 Զուխտակ չամամ մէջ քո ծոցին,
 Դու կը խաղաս խեղ լզնոցին,

Այս խաղը մեր ժողովածուի մէջ կայ իբրև Խանէի
երգ.

Խանէն կայնել դէմ ամրոցին,
Խանէն կըխաղէր հետ վզնոցին,
Ես մալուլ ենք ճերմակ ծոցին:

Սրա վարիանտներն են դարձեալ մեր ժողովածուից.

Կայնել ես դէմ ամրոցին,
Կը խաղաս քո վզնոցին,
Երկու շամամ քո ծոցին,
Զուխտակ Թուրլինջ քո ծոցին:

Դու կայնել ես դէմ ամրոցին,
Դու կը խաղաս հետ վզնոցին,
Մայիլ եղայ ճերմակ ծոցին:

Սրա վարիանտն է և հետեւեալը, որ իբրև պարերգ
կայ Տ. Նաւասարդեանի հայ ժողովրդ. Հեքիաթներ, 2.
Գիրք. եր. 92.

Դուն կայներ էր դէմ ամրոցին,
Հա կը խաղէր խետ վզնոցին.
Ծառայ քու սպիտակ ծոցին,
Որ տուն դառնաս՝ ես ի՞նչ անիմ:

7, Դու կայներ ես դարկըհի դուռ,
Մէջքդ մանի խանչլի բուռ,
Զիս էրեցիր սաւզալ ու ծուռ:

Այս խաղն իբրև քառեակ կայ Վանայ Սաղ Ա. եր.
41. «Կանչեմ եմ, արի» ելն. կրկնակի հետ.

Տնէն ելար, կայնար ի դուռ,
Մէջքդ ի բարակ խանչալի բուռ,
Քամին եգար ետու շուռ մուռ,
Ես քո սիրուն աւզալ ու ծուռ:

Նոյնը Քնար Մշ. և Վան. եր. 22. «Աղջիկ եար ա-
նենք» ելն. կրկնակի հետ.

Դու ելել ես, կայնել ես դուռ,
Մէջքդ բարաւ խանչալի բուռ,

Քո հօրն ու մօր անքերն եկուր,
Տղէն տեսաւ, աղջիկն ետուր:

Այսպէս տեսնում ենք Զուլոյի անուան երգուած խաղերը ասուում են և Լուրիկի, Խանէի, Ասմարի, Խումարի ևլն. անուան: Դրանք ուրեմն այն կարգի երգերին են պատկանում, որոնք ընդհանուր դոյն ունին միայն և, ինչպէս «Հաղար ու մի խաղի» Ա. յիսնեակի ծանօթութեան մէջ դրել ենք, «անկապ տներով, խառն ի խուռն երգուում են այս կամ այն անձի, կամ զանազան համանման գէպերի մասին»:

Անցնենք միւս տեսակների յարադրութեանը:

(Կը շարունակուի)

Մ. Ս. Բեդեան.

Կաթից սեր գաւելու այլ եւ այլ եղանակներ.

Այն բոլոր միջոցները, որոնք գործադրւում են կաթից հնար եղածին շափ մեծ քանակութեամբ սեր զատելու և նրանից ճարպ ստանալու համար, երկու խմբի են բաժանւում. ա. բնական եղանակով կամ կաթը փռելով սեր քաշելը, երբ ճարպային գնտակիկները բարձրանում են կաթի երես, բ. կենտրոնախոյս զօրութեամբ սեր զատելը:

Ա.) Բնական կամ հասարակ եղանակով կաթից սեր գաւելը այժմս քանի գնում աւելի և աւելի կորցնում է իւր նշանակութիւնը, որովհետեւ հետզհետէ ամեն տեղ տարածւում է կենտրոնախոյս մեքենաներով սեր զատելու ամենայնարմար և գիւրին միջոցը: Բայց գիւղատնտեսութեան այլ և այլ անբարեյաջող հանգամանքների պատճառով գուցէ մեղանում շատ ուշ մուտ գործեն սեր զատելու համար գոյութիւն ունեցող կենտրոնախոյս մեքենաները: Այս պատճառով բնական եղանակով սեր զատելու մասին այստեղ կարեւոր ենք համարում մի հարեանցի ակնարկ ձգել:

Ռուսաստանում և մեղանում՝ Կովկասում գործադրւում է գլխաւորապէս երեք եղանակ. ա. կաթը փռում են հասարակ